# ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

**Մ. ՇԱՀԻՆ**, Հայաստանի թագավորությունը: *Լոնդոն, Նյու Յորք, Սիդնեյ, «Կրում Հելմ», 1987:*

M. CHAHIN. The kingdom of Armenia.—London, New York, Sydney: Croom Helm, 1987.

Ծագումով հայ գիտնական Մ. Շահինի անունը մեզ հայտնի է դեռևս 1977 թ.-ից, երբ «Պատմությունն այսօր» անգլիական ամսագրի № 6-ում տպագրվեց նրա «Արարատ. Հայաստանի հնագույն թագավորությունը» մեծածավալ հոդվածը: Այնուհետև 1984 թ. լույս է տեսնում Բրիստոլի համալսարանի դասախոսի «Հայաստանի մի քանի առասպելական թագավորներ— Արդյո՞ք կարելի է նրանց կապել իրական պատմության հետ» վերնագիրը կրող աշխատությունը Մեսսչուսեթսի Քեմբրիջ քաղաքի «Հայագիտական հետազոտությունների ընկերության» ամսագրում, և մեկ տարի անց նույն ուսումնասիրության ծավալուն տարբերակը միևնույն ընկերության ռեֆերատիվ գրականության մատենաշարում: Իսկ 1987 թ. Անգլիայում լույս է տեսնում Մ. Շահինի մենագրությունը՝ «Հայաստանի թագավորությունը» վերնագրով: Այս գիրքը արդեն հանգստյան կոչված դասախոսի տարիներ շարունակ կատարած հետազոտությունների հանրագումարն է:

Մենագրության հիմնական մասը նվիրված է հայ ժողովրդի հնագույն շրջանի պատմությանը՝ Արարատ-Ուրարտուի հայկական թագավորությանը: Սա թերևս անգլերեն առաջին գիրքն է, որն իր մեջ պարփակում է հայոց չորսհազարամյա պատմությունը, դրան զուգահեռ նաև անընդհատ փոփոխվող հարևան պետությունների ու ժողովուրդների մասին համառոտ ակնարկներ՝ սկսած Բաբելոնից, Ասորեստանից ու Պարսկաստանից մինչև արաբները, բյուզանդացիներն ու խաչակիրները: Ընթերցողը սույն գրքի միջոցով հստակ պատկերացում կարող է կազմել նաև հունական ու հռոմեական քաղաքակրթությունների մասին: Զետեղված են ժամանակագրական աղյուսակներ, քարտեզներ, լուսանկարներ ու գծանկարներ, (կան պատկերներ Բրիտանական թանգարանի ցուցանմուշներից):

Խոսելով Ուրարտուի մասին, հեղինակը մանրամասն տալիս է թագավորության գոյատևման ընթացքի պատկերը, խոսում քաղաքական կազմակերպվածության, քաղաքաշինության, առևտրի, կրոնի ու արվեստի մասին, վերջինիս մեջ չմոռանալով նշել ռազմական գույքի ու տարազի վերաբերյալ տվյալներ ևս, որոնք պեղումներից են գտնվել: Աստվածաշնչում Արարատ, իսկ ասորական աղբյուրներում Ուրարտու կոչված այս պետության մշակույթը, նշում է հեղինակը, չնայած չափերով ու մոնումենտալությամբ զիջում էր ասորականին, սակայն արժեքով ու կարևորությամբ հետ չէր մնում նրանից: Այնուամենայնիվ ասորականի նկատմամբ գիտնականների ցուցաբերած մեծ հետաքրքրությունն ու նախընտրությունը ստվերում են թողնում ուրարտական քաղաքակրթությունը: Մ. Շահինը գրում է. «Շատ ասորագետներ անցյալում հակում են ունեցել չափազանցնելու ասորեստանցի միապետների ռազմական կարողությունը, նրանց կազմակերպչական ունակությունն ու բանակի անպարտելիությունը: Եվ գրելով հանդերձ Ասորեստանի ու Ուրարտուի միջև դարեր տևող անվերջ պայքարի մասին, կարծես անտեսել են այն փաստը, որ ոչ մի պետություն իր գոյության ամբողջ ընթացքում նման վտանգ չի հանդիսացել մեկ այլ պետության համար»: Հիրավի, այդպիսին էր Ասորեստանին հարևան Ուրարտուի պատմությունը, հատկապես մ. թ. ա. 850—650 թթ. դեպքերը: Ճիշտ է նկատել հեղինակը, որ փաստերը հետազոտելու և համադրելու ցանկության դեպքում Ուրարտուն էլ կկանգներ Ասորեստանի կողքին, որպես հին աշխարհի մշակույթի կարևորագույն օրրաններից մեկը, մանավանդ որ Հ. Օրբելու, Ն. Ադոնցի, Բ. Պիոտրովսկու, Կ. Հովհաննիսյանի և ուրիշների կատարած պեղումները բազմաթիվ նյութ էին երևան բերել Ասորեստանին ժամանակակից հարևան թագավորության մասին: Մի հարց միայն պետք է հիշատակել այստեղ. հեղինակը կամ ծանոթ չէ արվեստագիտական, հնագիտական, լեզվաբանական ու ծագումնաբանական հարցերի վերջին դրույթներին, կամ էլ խուսափել է դրանք շոշափելուց, այսինքն՝ ուրարտական-արարատյան թագավորության Հայաստանի տարածքի մեջ հայտնի առաջին հզոր *«հայկական»* թագավորությունը լինելու փաստը նա չի արծարծել:

Գրքի հաջորդ մասը հեղինակը նվիրել է իրար հաջորդող հայոց Երվանդունիների, Արտաշիսյանների, Արշակունիների ու քիչ անց Բագրատունիների թագավորական հարստություններին, Կիլիկիայում մոտ 300 տարի տևած հայոց Ռուբինյան, Հեթումյան և Լուսինյան իշխանական տների թագավորությանը, այս բոլորի կառավարման տարիների ընթացքում տեղի ու-

նեցած պատմական կարևոր իրադարձություննե-րին: Առանձին գլուխներով ներկայացվել է կրոնը, լեզուն և կրթությունը, ճարտարապետությունը:

Վերջին գլխում, որտեղ Շահինը հանգամանորեն խոսում է հայ ճարտարապետության մեջ եկեղեցաշինության ունեցած մեծ ավանդի մասին, նա չի ժխտում այն տեսակետը, որ դեռևս անցյալ դարում առաջ էր քաշել ավստրիացի հայտնի ճարտարապետ-գիտնական Յոզեֆ Ստրժիգովսկին, այն է՝ թե Արևմուտքի շինարվեստի գոթական ոճի հիմնական տարրերը սերվել են հայ ճարտարապետությունից, ավելի ճիշտ՝ Անիի դպրոցից: Այլ խոսքերով՝ Շահինը Անիի ճարտարապետական դպրոցը համարում է գոթական ոճի հիմքը: Նա անձամբ այցելել է թե՛ Խորհրդային և թե՛ պատմական Հայաստան: 1968 թ. հյուրընկալվել է Երևանում, ներկա գտնվել պրոֆեսոր Կոստանդին Հովհաննիսյանի ղեկավարությամբ դեռևս շարունակվող Էրեբունիի պեղումներին, եղել է Կարմիր Բլուրում, Արգիշտիխինիլիում: Այցելելով Անի՝ նա վկայում է, որ վաղեմի փառապանծ մայրաքաղաքը շրջապատող հսկա պարիսպները, քարուքանդ եղած հազար ու մեկ եկեղեցիները և նրանց բարձրարժեք որմնապատկերները և ցնցող, և ճնշող տպավորություն են թողնում այցելուների վրա: Մնում է ցավել, որ անխնամ թողնված արվեստի այս գլուխգործոցները, օրեցօր ավելի են մաշվում, քանդվում ու ավերվում:

Գիտնականը խոսում է նաև հայ շինարվեստում տեղի ունեցած փոխազդեցությունների մասին, հարց բարձրացնելով՝ թե կողք-կողքի գոյատևած հայկական ու բյուզանդական արվեստներից ո՞րն է ազդել մյուսի վրա: Նա այսպես է մեկնաբանում, հիմնվելով պատմական այն իրողության վրա, որ քրիստոնեությունը մոտ մեկ դար առաջ է պետական կրոն հռչակվել Հայաստանում, քան բյուզանդականին նախորդած հռոմեական կայսրությունում, ապա բնականաբար եկեղեցաշինությունն էլ հայոց երկրում ավելի վաղ հիմքեր ունի, քան բյուզանդիայում: Տրամաբանորեն ճիշտ է հեղինակը, սակայն այս փաստարկումը բավարար չէ հիմնավոր գիտական բացատրություն տալու այս բավականին կարևոր և բարդ հարցին: Չպետք է մոռանալ, որ ազդեցությունները միակողմանի չեն լինում: Բայց կա մեկ այլ իրողություն ևս. փոխառվածը յուրացվում, համապատասխանեցվում է արդեն ունեցածին, իսկ եթե չի սեփականացվում ու մնում է խորթ, ապա ինքնաբերաբար մղվում է դուրս: Ահա սա է, որ կարիք ունի ավելի խոր ու համակողմանի ուսումնասիրման...

Վերջացնելուց առաջ Շահինը մի անգամ ևս ընթերցողին հիշեցնում է, թե հայոց պատմությունն ու մշակույթը, որ ավելի քան 4000 տարվա տևողություն ունի, մինչև օրս կա և գոյատևում է: Հետաքրքիր է սակայն, որ գիտնականը չնայած Ուրարտուն չի նշում որպես հայկական իշխանություն կամ տարածք, բայց Ուրարտական թագավորությունն էլ է ընդգրկում հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը պարփակող ժամանակաշրջանի մեջ:

Գրքի շապիկին հետևյալ մակագրությունն է. «Հայաստանը կախարդական բնություն ունեցող երկիր է, որտեղ գերիշխում է վեհապանծ Արարատ լեռը...», իսկ «...հայ ժողովուրդը աշխարհի ամենահին և մինչև օրս գոյատևող քաղաքակրթություններից մեկի կրողն է...»:

Մնում է շնորհակալ լինել անգլիացի գիտնականին իր հայանպաստ գործունեության համար և հուսալ, որ հաջորդիվ հայոց ծագումնաբանական հարցերը շոշափելիս նա ավելի համարձակ կլինի ընդունելու և շրջանառության մեջ դնելու արդեն ապացուցված ու լուծված հանելուկները:

Ա. Ժ. ՀԱԼԱՋՅԱՆ

**ԱՆՆ ԱՎԱԳՅԱՆ, Հայաստանը և հայերը ակադեմիական ավարտաճառերու մեջ, *Ա. Հավելված, Պերքլի, 1987, 53 էջ։***

Anne M. AVAKIAN, Armenia and the Armenians in Academic dissertations, Supplement One, Berkeley, 1987, 53 pp.

Վերջին տարիներուն Արևմուտքի մեջ հայագիտության նկատմամբ հետզհետե աճող հետաքրքրությունը (մասնագիտական նոր հանդեսներ, միջազգային գիտաժողովներ, հրատարակություններ, ամբիոններ, ընկերություններ և այլն). ուրախառիթ երևույթ մըն է, որ կու գա ամրացնելու մեր մշակույթի ու պատմության ուսումնասիրության հիմքերը և փաստ մըն է անոր ունեցած կարևորության՝ բաղդատական հետազոտություններու գծով:

Հատուկ կարևորություն կը ներկայացնեն հայկական նյութերու նվիրված ավարտաճառերու (դիսերտացիա)՝ թեկնածուական թե դոկտորական, անոր ամենուրեք, ինչ որ ցույց կու տա ուսումնական բարձրագույն մակարդակի վրա բավականին շեշտված «հայկական գոյության» փաստը: Մինչև վերջին ժամանակները, այս աշխատանքը հատուկենտ հիշատակումներու արժանացած էր, իսկ տպագրված ավարտաճառերու որոշ թիվ մը մտած էր Արմենակ Սալմասլյանի կազմած «Հայկական Մատենագիտության» մեջ:

Այս մարզին մեջ լիակատար ցուցակի մը անհրաժեշտությունը զգալի էր և զայն 1974 թվականին լույս աշխարհ հանեց ամերիկահայ մասնագետ Անն Ավագյան՝ «Հայաստան և հայերը ակադեմիական ավարտաճառերու մեջ» խորագրով անգլերեն մատենագիտությունը:

Տարիներու ընթացքին նոր ավարտաճառերու կուտակումը և նկատված բացթողումներու լրացումը բավականաչափ նյութ տվին, որպեսզի Ավագյան ձեռնարկեր իր սկզբնական գործի հա-